ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY

**FOUNDATION**

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

27.04.26թ.

02/Ն

# Ո Ր Ո Շ Ու Մ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ

## ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | Չափաբաժնի | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29 | 1 | Լվացքի մեքենա | 430000 | «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ | 71024712 | Տավուշի մարզ Գ.Կողբ 40փ.տ.23/2 | 03.04.2026թ. | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ | «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթղթում՝ Գլխագրի աջ անկյունում, թերի է լրացված եղել Ընթացակարգով սահմանված մրցույթի ծածկագիրը՝ «Հավելված N 1 «---ԷԱՃԱՊՁԲ---/---»" ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի», մինչդեռ պետք է լրացված լիներ՝ «Հավելված N 1 «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի»: Ինչպես նաև «Առաջարկվող ապրանքի նկարագիր» փաստաթղթում 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես առաջարկվել է՝ «Լվացքի մեքենա առնվազն 11 կգ տարողությամբ, պտույտների արագությունը՝ առնվազն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 1400պտ/ր: Էներգաարդյունավետության դաս՝ A: Ծրագրերի քանակը՝ առնվազն 13: Շարժիչի տեսակը՝ ինվերտոր: Լվացման ժամանակ աղմուկը՝ առավելագույնը 52(դԲ): Էկրանի առկայությամբ, WiFi: Լարումը՝ 220-240Վ լարման, 50-60Հց հաճախականության:», սակայն իրավերով պահանջվել է՝ «Լվացքի մեքենա առնվազն 11 կգ տարողությամբ, պտույտների արագությունը՝ առնվազն 1400պտ/ր: Էներգաարդյունավետության դաս՝ A: Ծրագրերի քանակը՝ առնվազն 13: Շարժիչի տեսակը՝ ինվերտոր: Լվացման ժամանակ աղմուկը՝ առավելագույնը 52(դԲ): Էկրանի առկայությամբ, WiFi: Լարումը՝ 220-240Վ լարման, 50-60Հց հաճախականության: Գույնը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Երաշխիքային ժամկետը առնվազն՝ 12 ամիս: Մատակարարումը և բեռնաթափումը պահանջվող վայր մատակարարի կողմից:»: Դրանով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, 2026 թվականի ապրիլի 01-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Այնուհետև՝ 2026 թվականի ապրիլի 03-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից, թերի են ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները, դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: Մասնավորապես՝ «ՍԱՇԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված «Դիմում Հայտարարություն» փաստաթուղթը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: |

ՌԵԿՏՈՐ՝ Հ. ՋԱՔՈՅԱՆ